



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ի Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ Ի
Կ Ա Ր Գ Ա Դ Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

„ 6 „, փետրվարի 2014թ.

N 26

Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ս Տ Ե Ղ Ծ Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով
կարգադրում եմ՝

1, <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մադինա գյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

- Շառոյան Վ . - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի նախագահ
 - Օհանյան Ս - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ
- Նյութական պատասխանատու անձինք

- Մնացականյան Ս. - հանձնող
- Կարապետյան Ա. - ընդունող
- Բարսեղյան Գ. - դպրոցի հաշվապահ
- Եփրեմյան Գ. - դպրոցի տնտեսվար

2. Հանձնաժողովին՝ /նախագահ՝ Վ.Շառոյան/ ապրանքանյութական

արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ա.Հակոբյանին:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Մ Ա Ր Ձ Պ Ե Տ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ